


Corporate Social Responsibility

Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվություն

# ՎիվաՍելը Հայաստանին
# VivaCell to Armenia

Edition 1

*Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն*

*Corporate Social Responsibility*

**Edition 1**

ՎիվաՍելը, «ՄՏՍ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկությունն է

Երևան
«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ
2007

ՀՏԴ 654
ԳՄԴ 32.882
Վ 669

ՎիվաՍելը Հայաստանին:
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն.
– Եր. – «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, 2007. – 52 էջ:

ԳՄԴ 32.882

**ISBN 972-99941-2-103-8**
© «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, 2007



Թանկագին բարեկամ,

Յուրաքանչյուր առաջխաղացման ու հաջողության սկիզբը հավատն է:

Մարդ չի կարող լինել իրապես բարեկեցիկ, եթե չի հավատում, չի ձգտում երևույթների մեջ տեսնել լուսավոր կողմը: Առանց բարի գործերի ու դրանց բարեհաջող ավարտի հանդեպ իրական հավատի, մարդը երբեք չի կիսի իր հարստությունն ուրիշի հետ:

Հայաստանի ապագայի հանդեպ հավատն այն հիմնաքարն է, որի վրա ՎիվաՍելը կառուցել է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իր սեփական հայեցակարգը: Մեր որդեգրած բացառիկ բիզնես-մշակույթի ու մեր ազգային յուրահատկությունների նկատմամբ հավատը մեզ հնարավորություն է տվել հասնել առավել մեծ ձեռքբերումների:

ՎիվաՍելն իր կայացած ապրանքանիշի ու կորպորատիվ մտածողության հիմքում է դրել Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մոտեցումը՝ ելնելով այն իրողությունից, որ մեր տնտեսական գործունեությունը չի ծավալվում մեկուսացման մեջ, ինչպես նաև չի կարող զարգանալ, եթե երբեք ներդրումներ չանենք ի նպաստ մեր քաղաքացիների բարեկեցության:

Միասնաբար, ձեռք ձեռքի տված, մենք կկառուցենք ավելի լավ ապագա Հայաստանի համար:

Լավագույն մաղթանքներով,<br>Ռալֆ Յիրիկյան<br>ՎիվաՍելի Գլխավոր տնօրեն

Dear friend,

The start of every fortune-break and success lies in belief...

One cannot be truly prosperous if he/she cannot believe and push for the bright side of things. One will never share his/her wealth without the true belief in good-deeds and happy endings.

Believing in Armenia is the main pillar upon which VivaCell has developed its Corporate Social Responsibility. Believing in our unique business culture and in our national peculiarities gave us the capacity to better achieve.

VivaCell chose to position Corporate Social Responsibility approach at the heart of its brand and corporate thinking, building on the fact that our businesses don’t act in a vacuum, and it cannot flourish unless we invest in the well-being of our fellow citizens.

Together and hand in hand we build a better future for Armenia…

Best regards,<br>Ralph Yirikian<br>General Manager<br>VivaCell

## Ի՞նչ է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն արտացոլում է մասնավոր կամ պետական ոլորտում գործող ցանկացած առևտրային և այլ կազմակերպության նվիրվածությունն այն հասարակությանը, որում գործում է այդ կազմակերպությունը:

Փաստն այն է, որ ընկերություններն իրենց գործունեության, արտադրանքի, ծառայությունների, ինչպես նաև հիմնական շահառուների՝ այն է՝ աշխատողների, հաճախորդների և մյուսների հետ շփման հետևանքով ազդեցություն են ունենում հասարակության և շրջակա միջավայրի վրա:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը նշանակում է ճանաչել և գիտակցել այդպիսի ազդեցությունները և կառավարել բիզնեսն այնպես, որ այն նպաստի սոցիալական, բնապահպանական և տնտեսական արժեքների աճին, այդպիսով կայուն դրական ազդեցություն գործելով թե հասարակության և թե բիզնեսի վրա: Այլ կերպ ասած, ԿՍՊ-ն իրենից ներկայացնում է կենդանի կառավարման լեզու, որը ներթափանցում է յուրաքանչյուր գործառույթ և չի կարող սահմանափակվել առանձին վարչությունների կողմից իրականացվող մեկուսացված ծրագրերով:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը նշանակում է հավատ, խոսքերի ու խոստումների իրական գործողություններ:

ԿՍՊ-ի համընդհանուր սահմանում գոյություն չունի, քանի որ այդ գաղափարը մշտապես վերասահմանվում է՝ ժամանակին ու պահանջներին համապատասխան, միևնույն ժամանակ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր ընկերության պահպանել այն արժեքներն ու սկզբունքները, որոնցով նա առաջնորդվում է:

Այնուամենայնիվ, գոյություն ունեն ԿՍՊ-ի վերաբերյալ էական տարրեր, որոնք պետք է ճանաչել:

- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) կամավոր գործունեություն է
- ԿՍՊ-ն բազմաբնույթ է և փոփոխական իր գործունեությամբ
- ԿՍՊ-ն կապող օղակ է հանդիսանում կորպորատիվ կառույցների և հասարակության միջև
- ԿՍՊ-ն ծավալվում և զարգանում է ընթացիկ ուսումնասիրություններին և ժամանակին համընթաց

## What is Corporate Social Responsibility?

Corporate Social Responsibility (CSR) reflects the commitments of any business and other organizations, whether in the private or the public sector, towards the society in which they operate.

The fact is that companies have an impact on society and the environment through their operations, products and services, interaction with key stakeholders such as employees, customers and others. CSR means understanding such impacts and managing business processes in a way to add social, environmental and economic value for producing a positive sustainable outcome for both society and the business. In other words it's a living managerial language, which penetrates into each function and can not be confined to random programs conducted by few departments in isolation from one another.

CSR is about believing and translating words and promises into real actions.

There is no universal definition of CSR because this concept is always being redefined thus, serving to needs and times, giving each company individually the freedom to define the values and principles it stands for.

Nevertheless, there are essential elements of CSR that need to be acknowledged:

- CSR is voluntary in inspiration
- CSR is multidimensional and diverse in application
- CSR is interactive in building bridges between corporate bodies and society
- CSR approach and implementation evolves and develops over time in an ongoing learning process

## Why should companies care about their social and environmental responsibilities?

“Environmental and Social Responsibility should beat at the heart of every business leader.” -Anita Roddick-

## Ինչո՞ւ ընկերությունները պետք է հոգ տանեն իրենց սոցիալական և բնապահպանական պարտականությունների մասին:

«Բնապահպանական և սոցիալական պատասխանատվությունը պետք է իր ուրույն տեղն ունենա յուրաքանչյուր գործարարի սրտի խորքում», – ասել է Անիտա Ռոդդիքը:
Ընկերությունները չեն գործում աշխարհագրական կամ սոցիալական մեկուսացման մեջ, դրանք հասարակության մի մասն են և ֆիզիկապես տեղակայված են որոշակի համայնքներում և տարածքներում: Դրանով է մասամբ պայմանավորված քաղաքացիական և սոցիալական պատասխանատվությունն այն համայնքների հանդեպ, որոնցում գործում է ընկերությունը:
ՎիվաՍելը հավատում է Հայաստանի ապագային և գիտակցում այդ պատասխանատվությունն ու մշտապես ջանքեր է գործադրում այն ինտեգրել յուրաքանչյուր ռազմավարական մտածողության և ծրագրավորման մեջ:
ԿՍՊ-ի համապարփակ ռազմավարության զարգացումն ու իրազեկումը պահանջում է ժամանակ, նվիրվածություն, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ: Այն պահանջում է նվիրվածություն՝ ընկերության բարձրաստիճան ղեկավարից մինչև յուրաքանչյուր բաժնի աշխատակից:
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությունը պետք է ներթափանցի յուրաքանչյուր գործողության մեջ՝ աշխատանքի ընդունելության գործընթացից, բրենդինգից մինչև արտադրություն և վաճառք:

## Ինչպե՞ս է ԿՍՊ-ն նպաստում առևտրային կազմակերպություններին

Իր պատասխանատվությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս առևտրային կազմակերպությանը ունենալ կարևոր և ազդեցիկ դեր հասարակության

Businesses don’t exist in a geographical or social vacuum; they are part of the society and located physically in particular communities and areas. This is in a way general civic and social responsibility towards the local communities in which business operates.

VivaCell believes in Armenia and recognizes this responsibility, thus the Company has been always striving to integrate it in the core of any strategic thinking and planning, and this is reflected in its daily operational behavior.

Developing and communicating a comprehensive CSR strategy takes time, commitment, focus, dedicated people and financial resources. It requires as well commitment from the top management down. CSR strategy must permeate all what we do – from hiring to branding to manufacturing to sales.

## *CSR Benefits to Businesses*

The increased awareness and focus on corporation’s responsibilities gives the business the opportunity to be important and powerful actor in society. It makes a business more competitive, resilient to shocks, and more likely to attract and hold both consumers and best employees.

The basic requirement for the economic development is sustainable business; the success of each business itself depends on the well-being of its citizens, society in its broadest sense. Taking into consideration the fact that CSR aims at achieving advanced economy, development of harmonious society and preservation of natural environment, corporations and business communities should be the most interested identities in being engaged in CSR. It’s not by chance that CSR is also recognized as “win-win policy”.

The awareness of CSR is becoming so high that every stakeholder will demand information concerning its treatment in the companies. Cus-

մեջ, լինել ավելի մրցունակ և ցնցումներին դիմացկուն, ինչպես նաև ձեռք բերել և պահպանել նոր հաճախորդներ և բարձրորակ կադրեր:
Տնտեսական զարգացման հիմնական գրավականը կայուն ընկերությունների առկայությունն է: Յուրաքանչյուր բիզնեսի հաջողությունն իր հերթին կախված է քաղաքացիների և, առավել լայն իմաստով, հասարակության բարեկեցության մակարդակից: Հաշվի առնելով այն, որ ԿՍՊ-ի անմիջական նպատակն է ապահովել տնտեսության, շրջակա միջավայրի և հասարակության առավելագույն կատարելագործումը, ընկերություններն ու գործարար աշխարհը պետք է առավել շահագրգռված լինեն ԿՍՊ-ի մեջ ներգրավվածությամբ: Պատահական չէ, որ ԿՍՊ-ն հայտնի է որպես «**վին-վին փոլիսի**», որ նշանակում է բոլորի համար հավասարապես փոխշահավետ քաղաքականություն:
ԿՍՊ-ի վերաբերյալ իրազեկության մակարդակը գնալով այնքան բարձրանում է, որ յուրաքանչյուր շահառու ցանկանում է տեղեկացված լինել այն ընկերության մասին, որի հետ նա շփվում է:
Հաճախորդները պահանջելու են, որ ընկերությունները, շահութաբերության և հարկեր վճարելու սովորական պարտականություններից զատ, նաև նպաստեն սոցիալական ավելի խոր նպատակների իրագործմանը:
ՎիվաՍելը հավատացած է, որ ԿՍՊ-ի իրականացումը դառնում է կենսական գործոն, ինչը նպաստում է, որ հաճախորդներն ապրանքներն ու ծառայությունները գնեն պատասխանատու ընկերությունից, ներդնողները վստահեն այդ ընկերությանը, լավագույն աշխատակիցներն աշխատեն այդ ընկերության համար:

## *Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ՎիվաՍելի համար*

Իբրև տեղական ֆինանսական և տնտեսվարող կառույց, ՎիվաՍելի ԿՍՊ-ի մոտեցումը կայանում է կազմակերպության կարգավիճակի բարձրացման մեջ` ի շահ Հայաստանի ժողովրդի, Հայաստանի և ընդհանրապես հայ ազգի:

tomers will require companies to contribute to broader societal goals beyond the usual role of making profit, paying taxes etc.

VivaCell believes that CSR procurement is becoming vital to encourage customers to buy from the responsible company, investors to put their trust in it and the best people to work for such a company.

## *CSR for VivaCell*

VivaCell CSR vision is to better enhance the status of the company and that by positioning and developing its role as a pre-eminent local financial and business centre working for the benefit of Armenians, Armenia and its nation at large.

VivaCell is well aware that Corporate Social Responsibility is the subject of increasing attention and discussion at national and international levels bringing the business closer to society. Businesses that choose to ignore their society can harm their own success.

VivaCell believes in its capacity to contribute in promoting the understanding of multidimensional and evolving nature of CSR, hoping to set an example for other local institutions to follow the same steps.

For VivaCell CSR is to work and build business and social relationships based on respect, ethics, dedication, responsibility and trust; to maintain healthy and safe workplace for all our employees; to provide the conditions which are conducive to the development of the professional strengths and sense of individual accountability; to strive for equal approach in employee hiring and promotion; to keep honest relationships with suppliers; to deliver quality service for all our citizens.

Prosperity can not be maximized in isolation; we must build it hand in hand, and it is hand in hand that we should walk towards future Armenia.

ՎիվաՍելը գիտակցում է որ Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն առավել աճող ուշադրության և քննարկման առարկա է հանդիսանում՝ թե Հայաստանի, և թե համաշխարհային մակարդակով, որի հետևանքով տնտեսական գործունեության ու հասարակության միջև հարաբերությունները դառնում են ավելի ներդաշնակ:
Այն կազմակերպությունները, որոնք անտեսում են իրենց հասարակությանը, կարող են վնաս պատճառել սեփական հաջողությանը:
ՎիվաՍելը լի է հավատով առ այն, որ ի զորու է ընկալելի դարձնել Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բազմաշերտ և զարգացող էությունը՝ հուսալով, որ իրեն կհաջողվի օրինակ ծառայել, և որ այլ կազմակերպություններ կհետևեն այդ օրինակին:
Մեզ համար Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը նշանակում է մշակել և կառուցել սոցիալական և գործնական այնպիսի փոխհարաբերություններ, որոնք հիմնված են հարգանքի, էթիկայի, նվիրվածության, պատասխանատվության և վստահության վրա, ապահովել առողջ և ապահով աշխատատեղեր, մասնագիտական կատարելագործմանն ու անհատական պատասխանատվությանը նպաստող միջավայր, աշխատանքի ընդունելության իրավունքի և հնարավորության հավասար սկզբունքներ, մատակարարների հետ ազնիվ հարաբերություններ, և բոլոր քաղաքացիների համար որակյալ ծառայություններ:
Բարեկեցությունը չի կարող բազմապատկվել մեկուսացման մեջ: Մենք այդ ամենին պետք է հասնենք միասնաբար, և պետք է ձեռք ձեռքի տված քայլենք դեպի ապագա Հայաստան:

## *Հասարակության հետ ձեռք ձեռքի՝ ի խնդիր լավագույն ապագայի կառուցման, ՎիվաՍելն աջակցեց. –*

- «Վերադարձի» միջազգային երաժշտական փառատոն
- Բյուրականի աստղադիտակների վերանորոգում
- Լայնածավալ օգնություն Արմավիրի մարզին
- 54 հեկտարի անտառապատման ծրագիր Լոռիում, Տավուշում և Կոտայքում
- «Օրրանի» ծրագրով չքավորության ու մուրացկանության կանխարգելում
- Նանսենի անվան թանգարանի հիմնադրում Երևանում
- 10 անօթևան ընտանիքների համար բնակարանների կառուցում՝ «Հայկական Հաբիթաթ»
- «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն
- Արվեստի և արհեստագործության կենտրոն Երևանում և Գյումրիում
- «Ազգային Պատկերասրահ» Միջազգային երաժշտական փառատոն
- Հայաստանի կույրերի միավորման «Երաժշտական Կոլեկտիվներ»
- «ՎիվաՍելը և երեխաները բնության համար»
- Սեղանի թենիսի անդրանիկ առաջնություն լրագրողների միջև
- Շիդոկանի Եվրոպայի Բաց Առաջնություն
- «Հեռանկարներ XXI» երաժշտության ութերորդ փառատոն
- Արշավ ընդդեմ կարմրուկի և կարմրախտի
- «Դյուցազն» մարզական և առողջության կենտրոնի ջեռուցում
- «Գինու համազգային տոն»
- Մանկապատանեկան ֆիլմերի երկրորդ միջազգային փառատոն
- Տեղեկատվական, հեռահաղորդակցության և բարձր տեխնոլոգիաների «Digitec-2006» ցուցահանդես
- Հատուկ Օլիմպիական Խաղեր
- Հայաստանի Կարտինգի Ֆեդերացիա
- Հայաստանի կամերային նվագախումբ
- Բարեգործական ցուցահանդես-վաճառք
- Հայաստան-Սփյուռք Երրորդ Համահայկական Խորհրդաժողով
- Բարեգործական երեկույթ նվիրված տաղանդավոր երիտասարդների առաջխաղացմանը
- Կապի միջազգային տարածաշրջանային համագործակցության հանձնաժողովների հերթական նիստեր
- Ճանապարհաշինություն Գեղարքունիքի մարզում
- «Օրօր» մանկատների բարեգործական ծրագիր
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում
- Հայաստանի Ազգային գրադարանի գլխավոր շենքի մասնակի վերանորոգում

- Հայաստանի դպրոցների փոխկապակցման ծրագիր
- Դիլիջանի մանկապարտեզի կապիտալ վերանորոգում
- Դիլիջանի դպրոցի վերանորոգում
- Խաղահրապարակի կառուցում Սիսիանում
- Բժշկական սարքավորումներ Վանաձորի հիվանդանոցային համալիրին
- Բժշկական սարքավորումներ Գյումրիի հիվանդանոցին
- Չարենցավանի միջնակարգ դպրոցի վերանորոգում և կահավորում
- Աջակցություն Հայաստանում իրաքահայ փախստականներին
- Շուշիի «Կանաչ դեղատան» վերանորոգում
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտին նվիրված Առաջին համահայկական միջազգային համաժողով՝ «Արմտեք»
- «Հայ հնագույն նվագարաններ» ֆիլմի նկարահանում
- «ԱԹՀԳՕ քորփորեյշն»
- «Անհոգ մանկություն» մանկապարտեզի ֆինանսավորում
- Հեռուստամարաթոն
- Հեռախոսամարաթոն
- «Գեղագիտության ազգային կենտրոն»
- Հայաստանի Կարատեի Ֆեդերացիա
- «Հոգևոր մշակութային վերածնունդ» հիմնադրամ
- Ֆրիտյոֆ Նանսենի անվան Մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն
- Հիստոլոգիայի և ցիտոլոգիայի ուսումնական կենտրոն
- Հատուկ կարիքներ ունեցող երեխաների տարրական կրթության ինտեգրման նախագիծ
- «Խուլերի կրթամշակութային կենտրոն»
- Հայ կանանց միջազգային միավորում
- Բարեգործական ծրագրեր Չարենցավանում
- Արցախի ազատամարտիկների միություն
- «Սայաթ-Նովա» մշակութային կենտրոն
- «Անանիա Շիրակացի» ճեմարան
- «Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն»
- Երկրորդ միջազգային բժշկական խորհրդաժողով
- Կանանց ռեսուրսային կենտրոն

*Hand in hand with the society for a better future, VivaCell extended support to:*

- The “Return” International Music Festival with “Gallery of Arts” Cultural Fund
- The Byurakan Observatory telescopes Renovation
- The installation of heating system in 3 secondary schools and construction of a drinking water internal network in Zartonk village of Armavir region
- The forest planting of 54 hectares area in Tawush, Lori, Kotayk regions with “Hay Antar”
- The Orran charitable organization in preventing destitution and begging in Armenia
- The establishment of Nansen Museum in Yerevan
- HABITAT in the construction of 10 houses for homeless Armenian families
- The Golden Apricot International Film Festival
- The Creation of the “Art & grafts training/production centers for the children with special needs in Yerevan and Gyumri” with UNDP
- The “National Gallery” International Music Festival with “Gallery of Arts” Cultural Fund
- The Musical Ensemble of the Blinds Union
- The “VivaCell and Children for Nature”
- The First Table Tennis Tournament among journalists
- The Open European Shidokan Championship
- The Perspectives XXI” Eighth Music International Festival
- The Fight against Measles and Rubella, vaccination campaign with MACVF
- The installation of heating system of “Dutazn” sport complex in Armavir region
- The National Wine Festival
- The 2nd International Film Festival for children and young people
- The Digitec High Tech exhibition 2006
- The Armenian branch of Special Olympics Games
- The Karting Federation of Armenia
- The National Chamber Orchestra
- The Charity Bazaar
- The 3rd Armenia-Diaspora Conference
- The Charity event to promote young talents
- The Consecutive sessions of International Telecommunications Union
- The Road-building in Gegharkunik region
- The“Oror” charitable project for Orphanages
- The Event dedicated to the International Children’s Day
- The renovation of the administrative building of the National Library

- The Armenian School Connectivity program
- The Capital reconstruction of kinder-garden in Dilijan city
- The renovation of the school in Dilijan city
- The Playground building for the children in Sisian city
- The purchasing of Medical equipments to the Hospital Complex in Vanadzor city
- The purchasing of Medical equipments to the regional hospital in Gyumri city
- The Renovation and facilities purchasing for the physics class of Charentsavan's Public School
- The hosting of  the Iraqi Refugees in Armenia with UNHCR
- The “Green Pharmacy” foundation in Shoushi
- The first international All-Armenian high tech Congress
- The “Antique Armenian Instruments” film creation
- The ATHGO’s (alliance toward harnessing global opportunities)
- The “Happy Childhood” kinder-garden in Yerevan
- The Telethon
- The Phonethon
- The National Center of Esthetics
- The Armenian Federation of Karate
- The “Renaissance of spiritual Culture” Foundation
- The Armenian center of human rights protection after Fridtjof Nansen
- The Foundation of Patomorphology Study Center in Armenia
- The “Capacity building of Inclusive Schools Projects” in Armenia with UNICEF
- The “Study center for deaf”
- The Armenian International women association
- The charity projects in Charentsavan region
- The Union of Artsakh Freedom Fighters
- The “Sayat-Nova”Cultural Fund
- The Anania Shirakatsi Seminary
- The “Prkutyun” Center of children with special needs and young people
- The Second International Medical Conference
- The Women’s resource center



## «Վերադարձի» երաժշտական փառատոն

Փառատոնի անունն ինքնին հուշում է ամեն ինչ, այն է՝ մեկ տանիքի ներքո համախմբել հայ ազգի այն երաժիշտներին, ովքեր վերջին երկու տասնամյակների ընթացքում մեկնել են այլ երկրներ:

Դասական երաժշտության սիրահարներն առիթ ունեցան ունկնդրելու Սերգեյ Խաչատրյանի, Իրինա Հովհաննիսյանի, Կորյուն Ասատրյանի, Լուսինե Խաչատրյանի, Կարեն Հարությունյանի, Լևոն Մուրադյանի, Նարինե Ավագյանի, Գայանե Շառլույանի, Վահան Մարտիրոսյանի, Վլադիմիր Խաչատրյանի և այլ տաղանդավոր երաժիշտների ելույթները:

ՎիվաՍելը ձեռք մեկնեց, որպեսզի փառատոնը իրականություն դառնա:

## The "Return" Music Festival

The festival name says it all!

“Return Festival” brings together under one roof those Armenian classical musicians who left for other countries during the last two decades.

Classical music lovers in Armenia were given the opportunity to enjoy the concerts of Sergey Khachatryan, Irina Hovhannisyan, Koryun Asatryan, Lusine Khachatryan, Karen Aroutiounian, Levon Mouradyan, Narine Avakian, Gayane Sharluyan, Vahan Mardirossian, Vladimir Khachatryan and other outstanding musicians. VivaCell extended hand to make this festival a reality.





## Բյուրականի աստղադիտակների վերանորոգում

Բյուրականի աստղադիտարանը հայ աստղագիտության կարևորագույն կենտրոնն է, որտեղ տասնամյակներ շարունակ գիտական աշխատանքներ են կատարել հայ աստղագետները, ի մասնավորի՝ հայ մեծանուն գիտնական Վիկտոր Համբարձումյանը:
Վերանորոգման համար անհրաժեշտ նյութական միջոցների բացակայության պատճառով 2.6 մետրանոց աստղադիտակը վերջին շրջանում հայտնվել էր ծանր վիճակում:
ՎիվաՍելը՝ միշտ լինելով պատրաստ օգտակար լինելու այնտեղ, որտեղ կա հասարակությանը օգնություն ցուցաբերելու պահանջ, աջակցեց Բյուրականի աստղադիտակների կառավարման համակարգի արդիականացմանն ու վերանորոգմանը, ինչը հնարավորություն տվեց 2.6 մետրանոց դիտակի կառավարման համար ձեռք բերել և օգտագործել նորագույն սարքավորումներ: Մասնավորապես, փոխվեցին աստղադիտակի կառավարման կենտրոնի համակարգիչներն ու վերակառուցվեց ազոտի ստացման համակարգը՝ կառավարման կենտրոնի ջերմամեկուսացման նպատակով, ինչն անհրաժեշտ է դիտակից դիտումներ կատարելու համար:
ՎիվաՍելի հավելյալ աջակցության շնորհիվ վերանորոգվեց նաև Շմիդտի դասի 1 մետրանոց աստղադիտակը: ՎիվաՍելի օժանդակությամբ վերանորոգվեց աստղադիտակի էլեկտրոնային համակարգը: Մասնավորապես, պատրաստվեց լուսաընդունիչ սարք (CCD matrix) և գործարկվեց կառավարման համակարգը:
ՎիվաՍելի օգնության շնորհիվ աստղադիտարանի աշխատակիցներն ու մեր գիտնականները վերստին կօգտվեն Բյուրականի աստղադիտարանի այդ խոշորագույն դիտակներից:

## Renovation of Byurakan Observatory Telescopes

Byurakan Observatory is an important center of Armenian astrophysics and hosted for decades scholarly research conducted by Armenian astronomers, outstanding scientist Viktor Hambardzumyan among them.

Due to the lack of funds to cover maintenance costs, the 2.6 meters long telescope has been experiencing difficulties. Being always available where there is a need for social assistance, VivaCell supported the upgrade and renovation of Byurakan Observatory telescopes' management system.

In particular, new computers were bought for the control center, and the nitrogen synthesis system being used for the thermo isolation of the control center, necessary for the proper operation of the telescope also underwent a major upgrade.

Further to VivaCell contribution the long Schmidt telescope was extended by 1 meter, a CCD matrix was created and the management system was put into operation.





## 54 հեկտար տարածքի անտառապատման ծրագիր

Շրջակա միջավայրի պահպանումն ու կանաչ տարածքների վերականգնումը Հայաստանի համար կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրներից են: Անխնա ծառահատումները, կենցաղային աղբը, ինչպես նաև արտադրական թափոնները հարվածել են բնությանն ու ստեղծել բնական աղետների սպառնալիք: Նման աղետները կանխելու և լայնածավալ ծառատունկ կազմակերպելու նպատակն էր հետապնդում ՎիվաՍելի իրականացրած ծառատունկի ծրագիրը: Հայաստանի երեք մարզերում՝ Լոռիում, Տավուշում և Կոտայքում, կազմակերպվել է 224500 տնկիների գնումը, ծառատունկը և հետագա խնամքը:
Ծրագրի շրջանակներում կատարվել է սոճու, ընկուզենու, կաղնու, թխկենու, լորենու, խնձորենու, տանձենու, հացենու և այլ ծառատեսակների ծառատունկ: Այս կապակցությամբ ՎիվաՍելի Գլխավոր տնօրենն ասաց. «ՎիվաՍելը ոչ միայն Հայաստանում շարժական կապի առաջատարն է և հաջողված ձեռնարկություն, այլև հայրենիքի ապագայի համար պատասխանատու կորպորատիվ քաղաքացի: Սերն ու պատասխանատվությունը սեփական երկրի հանդեպ վերացական գաղափարներ չեն: Ընդհակառակը, դրանք առարկայական են ու շոշափելի, և հոգատար վերաբերմունքը հայրենի բնության նկատմամբ յուրաքանչյուր հայրենասեր մարդու և կազմակերպության պարտականությունն է: Մարդիկ մի մասն են բնության և պետք է ներդաշնակ ապրեն նրա հետ: ՎիվաՍելի օժանդակության նպատակը սերունդների համար մեր բնության պահպանումն է»:

## The 54 Hectares Forest Planting Program

Preservation of natural environment and restoration of vital green zones are issues of utmost importance to Armenia. Merciless tree-cutting, domestic waste as well as industrial waste disposal have had negative impact on nature and threaten to cause natural disasters. Preventing such disasters and endorsing the large tree-planting is the project carried out by VivaCell support.

224,500 tree sets were obtained, planted and provided follow–up care in three marzes of Armenia: Lori, Tavush and Kotayk. In the frames of this project, pine-tree, walnut, oak tree, maple, lime-tree, apple tree, pear, ash-tree and other trees were planted.

“VivaCell is not only the leading mobile operator in Armenia, but also a corporate citizen responsible for the future of the Motherland. The love for and responsibility toward Motherland are not abstract notions. On the contrary, they are quite concrete and tangible, and the careful attitude toward Mother Nature is the duty of each and every patriotic person and organization.

Humans are part of the Nature and have to live in harmony with it. The purpose of VivaCell’s support is to retain the nature in its best shape for future generations”.





## *Հայաստանում չքավորության ու մուրացկանության կանխման «Օրրանի» ծրագիր*

ՎիվաՍելն առաջին հայկական ընկերությունն էր, որը միանում էր «Օրրան» բարեգործական կազմակերպությանը: Առաջնորդվելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իր երկարաժամկետ նվիրվածության սկզբունքներով, ՎիվաՍելը զգալի ու շարունակական աջակցություն ցուցաբերեց «Օրրանին»՝ Հայաստանում չքավորության ու մուրացկանության կանխարգելման միտված իր ծրագրերի իրականացման համար:
ՎիվաՍելի աջակցության շնորհիվ «Օրրանը» կարող է ոչ միայն իրականացնել կարիքավոր մարդկանց օգնելու իր ծրագրերը, այլև ցույց տալ, որ տեղական ընկերությունների ու Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու աջակցությունը կարող է նշանակալի դեր ունենալ մեր երկրում աղքատությունը նվազեցնելու գործում:

## *The Orran Project to Prevent Destitution and Begging in Armenia*

VivaCell is the first Armenian company to join Orran Benevolent Organization. Driven by its long-lasting commitment to corporate social responsibility, VivaCell provided continuous and significant support to Orran in the realization of its mission of preventing destitution and begging in Armenia.

Due to VivaCell support Orran is able not only to fulfill its activities targeting at needy people, but also to show that the support of local companies and each and every citizen of Armenia can make the difference in reducing poverty in our country.





CERTIFICAT "NANSEN"

## Երևանում Նանսենի թանգարանի ստեղծում

ՎիվաՍելն աջակցում է նաև այն նախաձեռնություններին, որոնց նպատակն է արծարծել Հայկական հարցն ու հիշեցնել 1915-1923 թթ. Հայկական ցեղասպանության իրողությունը:

Մեծ մարդասեր, հայտնի նորվեգացի բևեռախույզ, գիտնական ու դիվանագետ Ֆ. Նանսենը մեկն էր նրանցից, ովքեր իրենց առաքելությունը գտել էին Եղեռնից վերապրած հայերի իրավունքների պաշտպանության գործում: Եղեռն, որին զոհ գնացին 1,5 միլիոն հայեր՝ կորցնելով նաև իրենց պատմական հայրենիքը: Նանսենի մարդասիրական նախաձեռնությունների մեջ իր բացառիկ նշանակությամբ ու դրական ներգործությամբ առանձնանում է հատուկ անձնագրերի ստեղծումը 1922 թ., որոնք հետագայում ստացան Նանսենյան անձնագրեր անունը: Միջազգային ճանաչում ունեցող այդ հատուկ անձնագրերն Ազգերի լիգայի կողմից տրվեցին պետականազուրկ գաղթականներին: Նանսենյան այդ անձնագրերի շնորհիվ Եղեռնից մազապուրծ ավելի քան 320 հազար հայ վերապրողներ ապաստանեցին տարբեր երկրներում: Նանսենի Գաղթականների միջազգային գրասենյակը 1938-ին արժանացավ Նոբելյան մրցանակի՝ Նանսենյան անձնագրերի ստեղծման գործում ներդրած ավանդի համար:

2007 թ. օգոստոսի 15-ին Երևանում բացվեց Ֆ. Նանսենի թանգարանը: ՎիվաՍելն այնտեղ էր՝ աջակցելու, որպեսզի Նանսենի թանգարանի բացումն իրողություն դառնա:

## The Creation of Nansen Museum in Yerevan

VivaCell extends hands to all initiatives aiming at rising the Armenian Cause and perpetuating the memory of the Armenian Genocide of 1915-1923.

Great humanitarian, outstanding Norwegian explorer, scientist and diplomat Fridtjof Wedel-Jarlsberg Nansen was one of those who had found their mission in protecting the rights of hundreds of thousand Armenians who lived through the Genocide causing the death of over 1.5 million people and the loss of the historic homeland.

Among many humanitarian initiatives of Nansen there was one that had been recognized as being the most large-scale and having the highest impact. Special passports, designed in 1922 by Fridtjof Nansen and later on called Nansen passports were internationally recognized identity cards issued by the League of Nations to stateless refugees.

In particular, Nansen passports helped 320,000 survivors of the Armenian Genocide to immigrate to a country that would have them. The Nansen International Office for Refugees was awarded the 1938 Nobel Peace Prize for its efforts to establish the Nansen passports.

On August 15, 2007, the Nansen Museum was inaugurated in Yerevan. VivaCell was there providing all needed moral and material support to make this opening a reality.





## 10 անօթևան հայ ընտանիքների համար բնակարանների կառուցում

Գործարար ոլորտում առաջատարության հասնելն անհնար է առանց պատասխանատվության գիտակցության այն հասարակության հանդեպ, որում գործում ենք:
–«Որովհետև մենք հավատում ենք Հայաստանի ապագային»,– ասաց ՎիվաՍելի Գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վեհարանում կայացած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի շինարարական ծրագրի բացման արարողության ժամանակ: Ընկերությունն օժանդակեց «Հաբիթաթը մարդկության համար» ծրագրին՝ հովանավորելով 10 ընտանիքների բնակարանների կառուցման ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում 37 կարիքավոր ընտանիքներ Հայաստանի 10 համայնքներում իրենց բնակարանները կառուցելու հնարավորություն ստացան:
Մյուս կողմից, ՎիվաՍելի մի խումբ աշխատակիցներ, ՎիվաՍելի Գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի առաջնորդությամբ, միացան ընտանիքներին՝ օգնելու ավարտին հասցնելու իրենց բնակարանների կառուցումը:

## Home Building for 10 Homeless Armenian Families

Being a leader in a business can never be accomplished without the sense of responsibility towards the society we operate within.

“Because we believe in Armenia”, under this title initiated by the General manager of VivaCell Mr. Ralph Yirikian, during the opening ceremony of His Holiness Karekin II Work Project ,the company contributed to the Habitat for Humanity.

VivaCell sponsored the building of houses for 10 families. In the framework of this project designed and implemented by “Habitat for Humanity” organization, 37 needy families in 10 communities of Armenia completed their house.

On top of this, a group of VivaCell employees lead by the General Manager of the Company joined the families to help them finish the construction of their houses.





## «Ազգային Պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոն

«Ազգային Պատկերասրահի միջազգային երաժշտական փառատոնը վայելում է Հայաստանի մշակութային կյանքի նշանակալից իրադարձություններից մեկը լինելու համբավը: Փառատոնը նոր ու յուրահատուկ միջոցառում է, որը երաժշտությունն ու կերպարվեստը նույն տանիքի ներքո` Ազգային Պատկերասրահի Որմնանկարների սրահում, մեկտեղելու փորձ է: Այդ սրահում հյուրընկալվեցին լավագույն երաժիշտները, ինչպիսիք են` Բարսեղ Թումանյանը (բաս), Աննա Մայիլյանը (մեցցո-սոպրանո), Ալեքսանդր Չաուշյանը (թավջութակ) և ուրիշներ:

## The "National Gallery" International Music Festival

The "National Gallery" International Music Festival, a festival that has a reputation of being one of the remarkable events in the cultural life of Armenia.

The Festival is a new and unique event of having fine arts and music performance under one roof, in the Mural Painting Hall of the National Gallery.

Hosting the famous musicians-performers such as Barsegh Tumanian (bass), Anna Mailyan (mezzo soprano), Alexander Chaushian (cello), etc.





Արեւորդի
1-ին Տարածաշրջանային
Բնապահպանական
փառատոն
SunChild
The 1st Regional
Environmental
Festival
Urtsadzor
Ուրծաձոր
Garni
Գառնի
Գյումրի
Gyumri
Dilijan
Դիլիջան
Yerevan
Երեւան

## *«ՎիվաՍելը և երեխաները բնության համար»*

Շրջակա միջավայրի պաշտպանությունն ու պահպանումը Հայաստանում այն հիմնախնդիրներից են, որոնց լուծմանը նվիրված է ՎիվաՍելը: Բնության նկատմամբ վարքագծի փոփոխմանը միտված հանրային իրազեկման քարոզարշավներն աշխարհում համարվում են շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված առավել արդյունավետ միջոցներից: Այդ է պատճառը, որ ՎիվաՍելն աջակցեց համապետական նշանակություն ունեցող այնպիսի միջոցառման կազմակերպմանը, ինչպիսին է «Արևորդի» Առաջին տարածաշրջանային բնապահպանական փառատոնը: Դա ոչ թե միանգամյա իրադարձություն է, այլ շարունակական միջոցառումների շարք, որոնք կայացան 2007 թ. ընթացքում ամբողջ երկրով մեկ՝ «ՎիվաՍելը և երեխաները բնության համար» կարգախոսով:
Քարոզարշավի նպատակն էր խթանել տարածաշրջանային համագործակցությունը, հաստատել մասնագետների ու երիտասարդների միջև բնապահպանական-մշակութային երկխոսություն, երեխաներին ու երիտասարդությանը ներգրավել բնապահպանական ծրագրերում՝ ֆիլմերի պատրաստման, լուսանկարչական արվեստում հմտությունների ձեռքբերման, աշխարհով մեկ հայկական բնապահպանական ֆիլմերի տարածման միջոցով:

## *VivaCell and "Children for Nature"*

Protection and maintenance of natural environment in Armenia is one of the causes to which VivaCell is committed. Implementation of public education campaigns aimed at behavior change is considered to be one of the most efficient means of environmental protection. This is the reason why VivaCell provided support to an event of national magnitude such as the First Regional Environmental Festival “Sun Child”.

The Festival is not a one-time event but a series of continuous events held throughout the country in the framework of an environmental awareness campaign “VivaCell and Children for the Nature”.

The campaign aimed at promoting cooperation between professionals and youth in the region to reach environmental-cultural dialogue, and that by involving children and youth from all over the country in multiple environmental activities, such as filmmaking and photography training and promoting of Armenian environmental films worldwide.





## Պայքար կարմրուկի ու կարմրախտի համաճարակների դեմ

«Ընկերության մեծությունը պետք է չափվի ոչ թե նրա հնարավորություններով կամ եկամուտներով, այլ հասարակական կյանքի վրա նրա ունեցած երկարաժամկետ դրական ազդեցությամբ: Մեր գործողությունները հիմնված են հենց այս սկզբունքի վրա, և այսօր հպարտ ենք, որ դերակատարում ունենք MACVF-ի կատարած բացառիկ աշխատանքում»,– ասաց ՎիվաՍելի Գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Կարմրուկի վերացման արշավը, որը մեկնարկեց 2007 թ., հանդիսանում է Հայաստանի կառավարության կողմից ընդունված կարմրուկի վերացման ռազմավարության մի մասը՝ ի պատասխան Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ եվրոպական տարածաշրջանից Կարմրուկի վերացման ռազմավարության: Չնայած վերջին տասնամյակներում Հայաստանում կանոնավոր կերպով իրականացվող կարմրուկի դեմ պատվաստման աշխատանքներին, Հայաստանը դեռևս պատկանում է կարմրուկի համաճարակների նկատմամբ ընկալունակ երկրների թվին: ՎիվաՍելը Հայաստանում առաջին ընկերությունն էր, որը մասնակցում ու իր ավանդն էր ներդնում ազգային նշանակություն ունեցող այսպիսի գործին: ՎիվաՍելի առատաձեռն նվիրաբերությունը հնարավորություն կտա Հայաստանի երեխաների համար ձեռք բերել կարմրուկի-խոզուկի/պարոտիտի պատվաստանյութերի խիստ անհրաժեշտ պաշարներ:

## Fighting Measles and Rubella Diseases

"The greatness of a company should be measured not by its size or revenues, but its long-term positive impact on the life of the public it serves," said Ralph Yirikian, General Manager of VivaCell. "Our operations are based on this very principle, and today we are proud to have a role in the extraordinary work."

Launched in 2007, the Measles and Rubella Supplementary Immunization Campaign is part of the Measles Elimination Strategy submitted to the Armenian government, which acted in response to the WHO strategy for Eliminating Measles and Rubella from the European Region. Despite its routine measles-immunization efforts in recent decades, Armenia was on the list of countries susceptible to measles outbreaks.

VivaCell was the first corporation in Armenia to join and contribute to a cause of national magnitude. VivaCell's generous contribution helped to obtain critically-needed supplies of the measles-mumps (MR) vaccine for the children of Armenia.





## Հատուկ կարիքներ ունեցող երեխաների արվեստի ու արհեստագործության կենտրոն

Հատուկ կարիքներ ունեցող երեխաների արվեստի ու արհեստագործության կենտրոնը, ՎիվաՍելի աջակցությամբ, ստեղծվեց «Գլոբալ Կոմպակտ-Հայաստան» ծրագրի շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Փյունիկ հասարակական կազմակերպության հետ համագործակցաբար:
Պրոֆեսիոնալ ուսուցիչների օգնությամբ հատուկ կարիքներ ունեցող երեխաները կստեղծեն արվեստի սեփական գործեր ու ձեռքի աշխատանքներ, որոնք հետագայում կվաճառվեն: Կենտրոնում ստեղծված իրերը կիրացվեն նաև Հայաստանի հուշանվերների մանրածախ խանութներում, ինչը թույլ կտա եկամտի նոր աղբյուրներ ստեղծել նրանց համար: Բացի այդ, կենտրոնները հնարավորություն են տալու մարդկանց կազմակերպել ժամանցի այլընտրանքային ձևեր, զարգացնել խնդիրների լուծման հմտություններն ու հայտնաբերել հանգստի նոր եղանակներ:

## The Arts and Crafts Center for Children with Special Needs

The Arts and Crafts Center for children with special needs supported by VivaCell was established within the framework of the Global Compact Armenia, with cooperation of UNDP and Pyunik NGO.

Under the supervision of professional trainers, people with special needs are making their own artwork and handicrafts to be sold, including a distribution of the items created at the Centers to retail souvenir shops throughout Armenia, thus creating new income generating scheme for them.

In addition to new income, the centers will provide an alternative way of organizing leisure for these people, develop the problem solving skills, and discover relaxation techniques.





## Ազգային գրադարանի մասնակի վերանորոգում

Հայաստանի Ազգային գրադարանը համազգային հաստատություն է: Ներկայումս գրադարանն ունի շուրջ 30000 ընթերցող: Օրական գրադարան են այցելում 1000 ուսանողներ: Այստեղ են պահպանվում հայ ստեղծագործական մտքի ու գրական ժառանգության ողջ հարստությունը:
Հաշվի առնելով այս հաստատության ազգային արժեքը, ՎիվաՍելն աջակցեց Ազգային գրադարանի մասնակի վերանորոգմանը:

## The National Library Partial Renovation

The National Library of Armenia is a nation-wide institution. It is the principal state library. At present the Library has approximately 30000 registered members. 1000 students visit the library daily.

The library houses resources representative of Armenian knowledge and creativity.

Taking into consideration the national value of this institution VivaCell contributed to the partial renovation of the Library.





## *Դիլիջանի մանկապարտեզի վերանորոգում*

Դիլիջանի մանկապարտեզը 1988-ի երկրաշարժի հետևանքով մասնակիորեն քանդվել էր: ՎիվաՍելը, համագործակցելով «Առաջինը երեխաների համար» բարեգործական կազմակերպության հետ, հանդես եկավ մանկապարտեզի վերանորոգումը հովանավորելու նոր ծրագրով: Ծրագիրը տևեց ավելի քան մեկ տարի, որի արդյունքում ամբողջովին վերանորոգվեց շենքն ու կահավորվեց երեխաների համար անհրաժեշտ հարմարություններով:

## *Dilijan Kinder-garden reconstruction*

Dilijan kinder-garden was partially ruined as a result of 1988 earthquake. VivaCell, in cooperation with “Children First” charity organization, introduced a new project of sponsoring the reconstruction.

The project lasted more than a year, resulting in completely renovated building and installment of new facilities for children.





## «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն

«Ոսկե Ծիրանը» դարձավ Հայաստանի ինքնության անբաժան մասն ու Հայաստանի մշակութային կյանքի նշանակալի իրադարձություններից մեկը:
Առաջնորդվելով Հայաստանի հասարակության առջև ստանձնած իր պարտավորությունները կատարելու գիտակցությամբ, և մշտապես նպատակ հետապնդելով աջակցել հայության համար հետաքրքրություն ներկայացնող միջոցառումներին՝ ՎիվաՍելը հովանավորեց «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնը, որի ընթացքում աշխարհի բոլոր կողմերից ժամանած կինոռեժիսորները հանդիպեցին Հայաստանում՝ մասնակցելու երկխոսության և խաղաղության այս փառատոնին:

## The Golden Apricot International Film Festival

Golden Apricot has become a part of Armenia’s image and one of the outstanding events in the cultural life of Armenia.

Driven by its commitment to the Armenian society, and always aiming at supporting all activities that are of interest to Armenians, VivaCell sponsored “Golden Apricot” 4th International Film Festival.

Film makers from all around the world gather in Armenia to celebrate the festival of dialogue and peace overcoming the challenges faced by the Armenian society by engaging in consistent and considerable social investment.





## Շուշիի «Կանաչ դեղատան» վերանորոգում

Շուշիի վերականգնումը կարևորագույն խնդիր է և յուրաքանչյուրիս պարտականությունը: Համագործակցելով «Շուշիի վերածնունդ» հիմնադրամի հետ՝ ՎիվաՍելն աջակցեց քաղաքի պատմական շինություններից մեկի՝ «Կանաչ դեղատան» վերանորոգման աշխատանքներին: «Կանաչ դեղատուն» ծրագրի նպատակն է Շուշիում հիմնադրել դեղատուն՝ բնակչությանը տրամադրել սուբսիդավորված գներով դեղորայք, խթանել փոքր ու միջին բիզնեսն ու ստեղծել մշտական աշխատատեղեր: Ծրագրի արդյունքում հիմնովին վերականգնվեց պատմական «Կանաչ դեղատունը», դրան հարող թանգարանի տարածքն ու պատմական Թադևոսի աղբյուրը:

## The Revival of Green Pharmacy in Shoushi

Reconstruction of Shoushi is an important task and duty for everyone. Therefore, in partnership with “Shoushi Revival Fund” VivaCell supported the renovation of one of the historical monuments, the Green Pharmacy in Shoushi.

The project aimed at establishing a pharmacy in Shoushi, and make medicines available to the population at the subsidized price, to encourage small and medium business and establish permanent jobs.

In the framework of the project the historical Green Pharmacy, the territory of the museum next to it, as well as the historical Spring of Tadevos have been fully reconstructed.





## *Հայաստան-Սփյուռք Երրորդ Համահայկական Խորհրդաժողով*

Հայաստան-Սփյուռք Երրորդ խորհրդաժողովը կայացավ պատմական իրադարձության՝ Հայաստանի Հանրապետության Անկախության 15-ամյակի հանդիսությունների նախօրեին:

Հավատարիմ լինելով համազգային ու հանրապետության հասարակական ու մշակութային կարևորագույն միջոցառումներին սատարելու իր որդեգրած ռազմավարությանը, ՎիվաՍելը հովանավորեց խորհրդաժողովի նախապատրաստական աշխատանքները:

## *Armenia-Diaspora Pan-Armenian Third Conference*

Armenia-Diaspora Third conference took place on the eve of a historical event-15th Anniversary of the Armenian independence.

Being loyal to its adopted strategy of supporting Pan-Armenian and most important public and cultural events in the Republic, VivaCell sponsored the conference preparation works.




Health Walk Sponsors

## *Հիստոլոգիայի և ցիտոլոգիայի ուսումնական կենտրոն*

ՎիվաՍելը ձեռք մեկնեց Հայ-ամերիկյան առողջության կենտրոնին, որն առավել հայտնի է Մամոգրաֆիայի կենտրոն անվամբ` անհրաժեշտ միջոցներ տրամադրելով շենքի ամբողջ 3-րդ հարկի կառուցման և կահավորման համար, որտեղ տեղակայվեց հիստոլոգիայի և ցիտոլոգիայի նորաբաց ուսումնական կենտրոնը: Այս նորաբաց կենտրոնում, որը հագեցած է նորագույն սարքավորումներով, բուժաշխատողները ստանում են համապարփակ կլինիկական ուսուցում` հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման հմտությունների գծով:

## *Histology and Cytology Training Center*

VivaCell extended a helping hand to the Armenian-American Wellness Center, which is better known as the Mammography Center, by providing necessary funds for the construction and refurbishment of the whole 3rd floor where the newly-established Histology and Cytology training center is to be located.

In this newly-opened Center with state-of-the-art equipment health care providers will receive comprehensive clinical training on early diagnosis and preventive care techniques.




UNICEF
36,773,760

## *«Ներառական դպրոցների կարողությունների հզորացման ծրագիր»*

Վիվասելը ձեռք մեկնեց ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ գործարկելու խոշորածավալ մի ծրագիր, որի նպատակն է հատուկ կարիքներ ունեցող երեխաներին ինտեգրել տարրական կրթության համակարգում:

Երևանի ու Տավուշի մարզի 8 ներառական դպրոցներում սովորող երեխաներն օգտվեցին վերոհիշյալ համատեղ ծրագրից: ՎիվաՍելի օժանդակությունը զգալիորեն կհեշտացնի այդ դպրոցների մատչելիությունն երեխաների համար՝ շնորհիվ թեքահարթակների կառուցման և հատուկ հարմարեցված միկրոավտոբուսների տրամադրման, ինչը թույլ կտա ապահովել տեղաշարժվելու դժվարություն ունեցող երեխաների փոխադրումը դպրոց և դպրոցից՝ տուն: Ծրագիրը ընդգրկում է նաև ուսուցիչների ինտերակտիվ վերապատրաստում՝ երեխայակենտրոն դասավանդման մեթոդներով, ինչպես նաև որոշ դպրոցներում ռեսուրսային դասասենյակների ստեղծում:

## *The "Capacity Building of Inclusive Schools Project"*

VivaCell joined hands with UNICEF in launching a huge multi-component project aiming at integrating children with special needs in basic school education.

Children with difficulties, studying at eight inclusive schools in the capital of Armenia Yerevan and in the region of Tavush, benefited from this joint project. VivaCell support has significantly eased children's access to those schools through construction of ramps and provision of specially equipped mini-buses to transport them to and from the school.

The project also includes training for teachers in interactive, child-friendly teaching methods and establishment of resource rooms at project schools.





## Լայնածավալ օգնություն Արմավիրի մարզին

Հայաստանի մարզերի կենսական ու անհետաձգելի խնդիրների լուծումը, ինչպես նաև հնացած ենթակառույցների վերականգնումը դարձավ ՎիվաՍելի գլխավոր մտահոգություններից մեկը: Հետևաբար, ՎիվաՍելն իր աջակցությունը բերեց Արմավիրի մարզի 3 գյուղերի հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգի վերականգնմանն ու մարզի Զարթոնք գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցման ծրագրերի իրականացման գործին:
Այս սոցիալական ներդրման շնորհիվ վերականգնվեցին ու սկսեցին գործել դպրոցների ջեռուցման ներքին համակարգերը, ինչպես նաև Զարթոնք գյուղի խմելու ջրի ներքին ցանցը:

## Large-Scale Support to Armavir Region

Resolving vital pending issues and renovating outdated infrastructure in the regions of Armenia became one of VivaCell main concerns. Therefore the company extended its support in installing heating system in secondary schools in 3 villages and construction of a drinking water internal network in Zartonk village of Armavir region.

Thanks to this social contribution the local heating systems of the schools and the drinking water network of Zartok village were completely installed and put into operation.





## Հայ հնագույն նվագարանների մասին պատմող ֆիլմ

ՀԱՅ-ART մշակութային կենտրոնը ստեղծել է ֆիլմաշարեր, որոնք կներկայացնեն հայ պատմամշակութային հինավուրց կոթողներն ու հայ մշակույթի նվիրյալների դիմանկարները: Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում պատրաստվեց նաև «Ազգային նվագարանների պատմափաստագրական շարժապատկեր»-ը, որի ստեղծումը հնարավոր դարձավ ՎիվաՍելի աջակցությամբ:

## Film about ancient Armenian Musical Instruments

HAY-ART Cultural Center started creating a series of films with an aim to present ancient Armenian cultural monuments as well as to depict the prominent figures of Armenian culture.

One of the works implemented throughout the project, the “Historical-documental Picture of Armenian Musical Instruments”, was made possible thanks to the support of VivaCell.




ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ՖԱՅԼԵՐ
ԻՆՏԵՐՆԵՏԻՑ
ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՉԵՔ
ԼԱՐԵՐԻՑ ԵՎ ԳԾԵՐԻՑ
GPRS* ՀԵՌԱԽՈՍԸ ԿԱՐՈՂ Է
ԾԱՌԱՅԵԼ ՆԱԵՎ ՈՐՊԵՍ ՄՈԴԵՄ

## *Տեղեկատվական տեխնոլոգիաների ցուցահանդես*

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում հայտարարված է տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը: Ոլորտի զարգացման նպատակով կազմակերպվեց տեղեկատվական, հեռահաղորդակցության և բարձր տեխնոլոգիաների «Digitec-2006» ցուցահանդեսը:

Կարևորելով տեխնոլոգիաների տեղն ու դերը երկրի տնտեսության զարգացման գործում, ՎիվաՍելը դարձավ այդ ցուցահանդեսի գլխավոր հովանավորը:

## *The IT Exhibition*

Development of the sphere of IT was declared as one of the priorities of the Armenian economy. With the goal of developing this field, Digitec-2006 Exhibition of Information and Communication High Technologies was organized.

Acknowledging the role and importance of information technologies in the development of national economy VivaCell became the General Sponsor of the exhibition.



## *Բովանդակություն* — *Table of content*


| Բովանդակություն | | Table of content |
|---|---|---|
| Ի՞նչ է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը: | 4 | What is Corporate Social Responsibility? |
| Ինչո՞ւ ընկերությունները պետք է հոգ տանեն իրենց սոցիալական և բնապահպանական պարտականությունների մասին | 5 | Why should companies care about their social and environmental responsibilities? |
| Ինչպե՞ս է ԿՍՊ-ն նպաստում առևտրային կազմակերպություններին | 5 | CSR Benefits to Businesses |
| Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ՎիվաՍելի համար | 6 | CSR for VivaCell |
| ՎիվաՍելի աջակցած ծրագրերը | 8 | VivaCell CSR list of activities |
| «Վերադարձի» երաժշտական փառատոն | 13 | The "Return" Music Festival |
| Բյուրականի աստղադիտակների վերանորոգում | 15 | Renovation of Byurakan Observatory Telescopes |
| 54 հեկտար տարածքի անտառապատման ծրագիր | 17 | The 54 Hectares Forest Planting Program |
| Հայաստանում չքավորության ու մուրացկանության կանխման «Օրրանի» ծրագիր | 19 | The Orran Project to Prevent Destitution and Begging in Armenia |
| Երևանում Նանսենի թանգարանի ստեղծում | 21 | The Creation of Nansen Museum in Yerevan |
| 10 անօթևան հայ ընտանիքների համար բնակարանների կառուցում | 23 | Home Building for 10 Homeless Armenian Families |
| «Ազգային Պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոն | 25 | The "National Gallery" International Music Festival |
| «ՎիվաՍելը և երեխաները բնության համար» | 27 | VivaCell and "Children for Nature" |
| Պայքար կարմրուկի ու կարմրախտի համաճարակների դեմ | 29 | Fighting Measles and Rubella Diseases |
| Հատուկ կարիքներ ունեցող երեխաների արվեստի ու արհեստագործության կենտրոն | 31 | The Arts and Crafts Center for Children with Special Needs |
| Ազգային գրադարանի մասնակի վերանորոգում | 33 | The National Library Partial Renovation |
| Դիլիջանի մանկապարտեզի վերանորոգում | 35 | Dilijan Kinder-garden reconstruction |
| «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն | 37 | The Golden Apricot International Film Festival |
| Շուշիի «Կանաչ դեղատան» վերանորոգում | 39 | The Revival of Green Pharmacy in Shoushi |
| Հայաստան-Սփյուռք Երրորդ Համահայկական Խորհրդաժողով | 41 | Armenia-Diaspora Pan-Armenian Third Conference |
| Հիստոլոգիայի և ցիտոլոգիայի ուսումնական կենտրոն | 43 | Histology and Cytology Training Center |
| «Ներառական դպրոցների կարողությունների հզորացման ծրագիր» | 45 | The "Capacity Building of Inclusive Schools Project" |
| Լայնածավալ օգնություն Արմավիրի մարզին | 47 | Large-Scale Support to Armavir Region |
| Հայ հնագույն նվագարանների մասին պատմող ֆիլմ | 49 | Film about ancient Armenian Musical Instruments |
| Տեղեկատվական տեխնոլոգիաների ցուցահանդես | 51 | The IT Exhibition |

## Հատուկ շնորհակալություններ

**Նկարներ**
Դավիթ Այվազյան
Սելին Դերբեկյան
Զավեն Խաչիկյան
ՖՈՏՈԼՈՒՐ
«ՀԱՅ-ART» Մշակութային Կենտրոն
Հայաստանի Հանրապետության Ազգային Արխիվ
Ֆրիտյոֆ Նանսենի անվան հիմնադրամ

ՎիվաՍելի աշխատակազմ

*Մենք ցանկանում ենք նաև մեր երախտագիտությունն արտահայտել այն բոլոր կազմակերպություններին, որոնք, ՎիվաՍելի հետ ձեռք ձեռքի տված, իրողություն դարձրեցին մեր ձգտումները՝ միջոցառումներն ու գործունեությունը հասցնելով հայ հասարակությանը:*

## Special Thanks to:

**Photos**
Davit Ayvazyan
Celine Derbekian
Zaven Khachikyan
Photolure
“HAY-ART” Cultural Center
The National Archive of R/A,
and the fund of Fridtjof Nansen, Armenia

VivaCell Staff

*We would as well like to appreciate all the efforts exerted by different organizations that hand in hand with VivaCell made our endeavors reach the Armenian society.*

*Ձևավորում և տպագրություն «Փրինթինֆո»*
*Designed & Printing by Printinfo*

*Շապիկի ձևավորում Ստատուս Հոլդինգ/Ֆայնբերգ ՍՊԸ*
*Cover designed by Status Holding/Fainberg LLC*

www.vivacell.am